# ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ԹԻՎ 10-24/01-Ա028

"24" Հոկտեմբերի 2016թ. ք. Երևան

«Արարատի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (ՊՈԱԿ), այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս տնօրեն Էլլա Գասպարյանի, մի կողմից և «Պրոգրես-Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերությունը, հետայսու՝ «Կատարող», ի դեմս գլխավոր տնօրեն Խաչիկ Բեգլարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրված թիվ ԱԾ N-081 «Աուդիտորական ծառայությունների իրականացման» լիցենզիայի հիման վրա, մյուս կողմից, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողն իրականացնում «Արարատի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության հետ կապված հետևյալ աշխատանքները.

1.1.1. ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան պատրաստված 2016 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների (ֆինանսական վիճակի մասին, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններ) և դրանց կից ծանոթագրությունների աուդիտը:

1.1.2. Աուդիտի նպատակն է Կատարողի կողմից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիքի արտահայտումը: Աուդիտը կներառի ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարները և բացահայտումները հիմնավորող ապացույցների ընտրանքային հիմունքներով ստուգում, կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված նշանակալի գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատում: Աուդիտը կներառի նաև ֆինանսական հաշվետվությունների ներքին վերահսկողության վերաբերյալ ուսումնասիրությունը՝ որպես տվյալ հանգամանքներին համապատասխանող աուդիտորական ընթացակարգերի մշակման հիմք, սակայն Պատվիրատուի ֆինանսական հաշվետվությունների ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք չի արտահայտվի:

1.2. Կատարողը պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացվող փաստաթղթերի և հաշվետվություններում արտացոլված տվյալների համար:

1.3. Պատվիրատուն պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված կարգով վճարել Կատարողին մատուցված ծառայությունների համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

### 2.1. Պատվիրատուն իրավունք ունի

- Կատարողից ստանալ տեղեկատվություն աուդիտորական գործունեությունը կարգավորող ՀՀ օրենսդրական ակտերի և աուդիտի միջազգային ստանդարտների վերաբերյալ:

### 2.2. Պատվիրատուն պարտավորվում է.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան և սահմանված ժամկետներում ինքնուրույն կազմել ֆինանսական փաստաթղթերն ու ֆինանսական հաշվետվությունները միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան;
- Ներկայացնել Կատարողին իր ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի բնօրինակները, և հետաքրքրող հարցերի վերաբերյալ տալ բավարար գրավոր և բանավոր տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են սույն պայմանագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար;
- Կատարողի համար ապահովել անհրաժեշտ աշխատանքային պայմաններ;
- Ժամանակին վճարել Կատարողին ծառայությունների դիմաց;
- Չխոչընդոտել աուդիտի պատշաճ իրականացմանը, չձեռնարկել աուդիտի ընթացքում ուսումնասիրվող հարցերի շրջանակները սահմանափակող որևէ միջոց,

### 2.3. Պատվիրատուի պատասխանատվությունը

- Պատվիրատուն պատասխանատու է իր կողմից Աուդիտորին ներկայացված տեղեկատվության և փաստաթղթերի արժանահավատության համար:

### 2.4. Կատարողն իրավունք ունի

- Աուդիտի անցկացման ընթացքում լրիվ ծավալով ուսումնասիրել աուդիտի ենթարկվող անձի ֆինանսատնտեսական գործունեությանն առնչվող փաստաթղթերը,
- Պատվիրատուի համաձայնությամբ՝ գրավոր հարցումներ ուղղել երրորդ անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար՝ արժանահավատ աուդիտորական եզրակացություն և հաշվետվություն (նամակ ղեկավարությանը) կազմելու նպատակով,
- Աուդիտի իրականացման համար ներգրավել անհատ աուդիտորների և/կամ այլ մասնագետների,
- Պատվիրատուի կողմից անհրաժեշտ տեղեկատվություն չներկայացվելու կամ աուդիտի պատշաճ իրականացմանը խոչընդոտելու դեպքում հրաժարվել աուդիտորական եզրակացություն և հաշվետվություն (նամակ ղեկավարությանը) տրամադրելուց և միակողմանի լուծել սույն պայմանագիրը:

### 2.5. Կատարողը պարտավորվում է.

- Պայմանագրով նախատեսված աշխատանքներն իրականացնել ՀՀ գործող օրենսդրությանը և ընդունված Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն, պլանավորել և իրականացնել աուդիտն այնպես, որպեսզի արդյունքում ստացվեն բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական սխալներից;
- Սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարման ժամանակ առաջնորդվել անկախության, արհեստավարժության և մասնագիտական էթիկայի կանոններով;

*2.6. Կատարողի պատասխանատվությունը*

- Աուդիտորը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ՀՀ օրենսդրության պահանջները խախտելու, ինչպես նաև հարկային պարտավորությունները չկատարելու համար;
- Աուդիտորը ազատվում է Պատվիրատուի կողմից ներկայացված ոչ ճշգրիտ, կեղծ կամ մոլորեցնող տեղեկությունների հետ կապված կամ դրանց արդյունքում առաջացած որևէ պատասխանատվությունից:
- Սույն Պայմանագիրը կնքվում է Պատվիրատուի և Կատարողի միջև, և միայն Կատարողն է պատասխանատվություն կրում սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար: Վերջիններս նախատեսված են միայն Պատվիրատուի համար և ուղղված չեն երրորդ անձանց շահերին:

## 3. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

- Կատարողը պարտավորվում է չհրապարակել սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարման արդյունքում Պատվիրատուի և նրա հաճախորդների գործունեության վերաբերյալ իրեն հայտնի դարձած տեղեկություններ որևէ երրորդ կողմի;
- Կատարողի աշխատանքային փաստաթղթերը հանդիսանում են նրա սեփականությունը:
- Կատարողի աշխատանքային փաստաթղթերում և հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունն առևտրային գաղտնիք է և ենթակա չէ հրապարակման՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

## 4. ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1.1 Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, սույն պայմանագրով նախատեսված աշխատանքները կսկսվեն 2017թ. հունվարի 16-ին և կավարտվեն 2017թ. փետրվարի 28-ին, եթե դրանց ընթացքում չբացահայտվեն այնպիսի տեղեկություններ, որոնք անհնար կդարձնեն այդ աշխատանքների ավարտն այդ ժամկետում, կամ դրա հետագա շարունակումը:

4.1.2 Կատարողի կողմից աուդիտորական եզրակացությունը և հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը) Պատվիրատուին կհանձնվի մինչև 28 փետրվար 2017թ.:

4.1.3 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո կազմվում է հարկային հաշիվ, որն իր մեջ ներառում է վճարման ենթակա գումարը և այլ անհրաժեշտ տվյալներ:

4.1.4 Նախատեսված աշխատանքների կատարման համար Պատվիրատուն Կատարողին վճարում է սույն պայմանագրով մատուցված ծառայությունների ընդհանուր արժեքը, որը կազմում է 500,000 ՀՀ դրամ, գումարած ԱԱՀ 20% - 100,000 ՀՀ դրամ, ընդամենը՝ 600,000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

4.1.5 Պայմանագրային գումարի 50%-ը Պատվիրատուի կողմից պետք է վճարվի մինչև 2017 թվականի փետրվարի 28-ը, իսկ մնացած 50%-ը Պատվիրատուի կողմից պետք է վճարվի մինչև 2017 հունիսի 30-ը:

4.1.6 Պատվիրատուի կողմից վճարումը կատարվում է բանկային փոխանցման միջոցով:

4.1.7 Եթե, Աուդիտի միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան, և Կողմերի միջև ծագած անհամաձայնությունների վերացման անհնարինության դեպքում, Կատարողն ի վիճակի չէ ավարտել աուդիտը, ապա աուդիտորական եզրակացություն չի տրամադրվի սույն Պայմանագրի արդյունքում, փաստը կդիտվի Կատարողի՝ եզրակացություն տրամադրելու պարտավորության դադարում: Սույն պայմանագրի լուծման դեպքում (ցանկացած հիմքով), բացի Կատարողի կողմից կատարված փաստացի ծախսերի փոխհատուցումից, Պատվիրատուի կողմից Կատարողին կատարվող վճարը փաստացի մատուցված ծառայությունների դիմաց որոշում են Կողմերը:

## 5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել, կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է մեկ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույնով Կատարողը հաստատում է իր ստորադաս կամ փոխկապակցված չլինելը Պատվիրատուի հետ:

6.2 Սույն պայմանագրի շրջանակներում կողմերի ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար կողմերը կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

6.3 Սույն պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև ծագող բոլոր վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, առավելագույնս հաշվի առնելով մյուս Կողմի առաջարկությունները: Կողմերի միջև համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում, վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման և կնքման պահից:

6.5 Սույն պայմանագրի դրույթները կարող են փոփոխվել կամ պայմանագրի գործողությունը դադարեցվել կողմերի գրավոր համաձայնությամբ:

6.6 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից, յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

| ԿԱՏԱՐՈՂ | ՊԱՏՎԻՐԱՏՈՒ |
|---|---|
| «Պրոգրես-Աուդիտ» ՓԲԸ | «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ |
| ք.Երևան, Վ. Սարգսյան 26/3 | Արարատի մարզ, ք. Արարատ, Խանջյան 67 |
| h/հաշիվ 205002232887-1001 | h/հաշիվ 1150012303390100 |
| «Ինեկոբանկ» ՓԲԸ | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 01012831 | ՀՎՀՀ 04000082 |
| Գլխավոր տնօրեն՝ | Տնօրեն՝ |
| Խաչիկ Բեգլարյան | Էլյա Գասպարյան |
| Կ.Տ. | Կ.Տ. |

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|---|
| 28 | Փետրվար | 2017 թ. | | | Ա | 0382469464 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | | | | |
| 28 | Փետրվար | 2017 թ. | Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հատուկ | Ճշգրտվող հաշվի | |
| | | | | | Սերիա | Համար |
| | | | | | | |
| | | | | | Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| | | | | | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | [7] | |
|---|---|---|---|---|
| | 24 Հոկտեմբեր, 2016 թ. | 10-24/01-Ա028 | [8] | |
| | | | [9] | |
| [10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ) | | | | |

**Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի**

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 | 1 | 0 | 1 | 2 | 8 | 3 | 1 | | |
| [12] Անվանումը | ՊՐՈԳՐԵՍ-ԱՈՒԴԻՏ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) | | | | | | | | | |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 | 1 | 0 | 1 | 2 | 8 | 3 | 1 | / | 1 |
| [14] Բանկային տվյալները | Ինեկոբանկ ՓԲԸ | | | | N 205002232887-1001 | | | | | |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ Մամիկոնյանց 1ա 21 | | | | | | | | | |
| [16] Լրացուցիչ տվյալներ | | | | | | | | | | |

**Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի**

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| [17] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 | 4 | 0 | 0 | 0 | 8 | 2 |
| [18] Անվանումը | ՀՀ ԿՐԹ ԵՎԳԻՏ.ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏԻՊԵՏ.ՔՈԼԵՋ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) | | | | | | |
| [19] Բանկային տվյալները | Հայէկոնոմբանկ ՓԲԸ | | | N 1150012303390100 | | | |
| [20] Գտնվելու վայրը (հասցեն) | ԱՐԱՐԱՏ Խանջյան 67 | | | | | | |
| [21] Լրացուցիչ տվյալներ | | | | | | | |

| [22] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

**[23] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը**

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը) | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | 2016 թվականի տարեկան ֆինանսական աուդիտ | տարի | 1 | 500000 | 500000 | 20 | 100000 | 600000 |
| Ընդամենը | | | | | 500000 | X | 100000 | 600000 |

Դուրս գրող՝ KIRAKOSYAN ARTUR 3511740142
անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

28/02/2017 16:33:12

116/813